

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան 12 ֆր.
Վեցսուս 6 »

ԱՐՏԱՍ ԱՀՄԱՆ
2 քիւ մէկ ծրարով
Տարեկան 14 ֆր.
Վեցսուս 7 ֆ.


ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 տր.
Վեցսուս 1.50 »

ԿԱՆԻՍԻԿ

—o—

Մանուկան տղա
20 տարեկան



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՓԵՄԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

ՀԱՍՑԵ

Rédaction du journa

„Ipravounk“

V. A. N. A. (Bulgaria)

—o—

Редакция

на ВѢСТНИКЪ

„Иравункъ“

ВАРНА (България)

—o—

Իրավունք եւ
յան տարի

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՍՐՑԸ

Իր լիբերալութեամբ կամ լիբերալութեամբ զարգացած բնական զգացումները, որ կը ջանայ ամեն ինչ թուրքիոյ մէջ վարդապոյն ցոյց տալ, և դիւանագէտներու թուրքիոյ աննպատակ յայտնած կարծիքներուն միջոցով պատահաբար խեղաթիւրումներ կը յորինէ, այս անգամ չէ կրցած իր բարեկեան լիբերալութեան մէջ կարեւոր տեսակցութեան գոյնը փոխել և ստիպուած է բառ առ բառ հրատարակել Ռուսիոյ քաղաքականութեան շատ մօտէն տեղեկ տնօրէնական մը յայտնութիւնները Հայոց վիճակին բարեփոխութեանը առթիւ:

Հոս թարգմանենք այդ լիբերալ կեցութիւնը նոյնութեամբ:

Բարիկ, Երեւանի 22 Հոկտ.

Այս առաւօտ երկար խօսակցութիւն մ'ունեցայ ռուս գիւտարարութեան մօտէն տեղեկ տնօրէնականութեան մը հետ, և ահաւասիկ անոր ինչ որ քան խիստ շահեկան յայտնութիւնները համարեցի:

«Ռուսիոյ մէջ, Օրթոքսոս հանրային կարծիքը, որուն կայսրութեան ճակատագրին վրայ ունեցած ազդեցութիւնը ծանօթ է, եռանդուն կերպով կը զարգէ Հայոց վիճակովը, որուն մեծ թուով այս վերջին ժամանակներու մէջ Օրթոքսոս կրօնքին դիմած են:

«Խմբովին այս կրօնափոխութեան հետեւանք Ռուսիոյ մէջ երեւան եկած է համակարգի հոսանք. մը թէ մեծ անխառնութիւն պիտի ըլլայ երեսի վրայ ձգել, այդ հոսանքին պէտք է աւելցնել Պոլսոյ ռուսական դեսպանին ներկայացուցած գիտողութիւնները:

«Բեղադրուելի մէջ արդէն կը խորհին Պէրլինի դաշնագրին ճիշդ յօդուածը գործադրելու համար թիւրքիոյ պարտաւորեցնելու միջոցներուն վրայ:

«Այս պայմաններուն մէջ անհիմն չէ մտածել թէ Անգլիան՝ որ Հայոց խնդիրը պաշտպանելու համար պետութեան շարքին առաջին տեղը բռնած է միշտ, չպիտի ետ քաշուի գործնական միջոցներու գիտելէ որոնք կըրնան ձեռք առնուիլ ճիշդ յօդուածին գործադրութիւնը ձեռք բերելու համար:

«Դալով Ֆրանսայի, յայտնի է թէ

նա ի հարկին Ռուսիոյ համախոհ կըլլայ:

«— Եւ կրեա՞նք:

«— Բայց դա որոշ է որ կրեա՞նք, Եւրոպայի հետ միացումը այլ ևս միմիայն ժամանակի խնդիր է: Այս չի գիտնալու համար պէտք է բոլորովին տգէտ ըլլալ գիւտարարութեան մէջ անցած դարձածին:

«— Ուրիշն Ռուսիան պիտի թոյլատրէ՞ այս միացումը:

«— Այլ աւելին, անոր պիտի օգնէ ալ:

«— Ո՞ր պիտի հակառակի այդ բանին:

«— Ոչ ոք:

«— Ուրիշն այս ընկած գործ մըն է:

«— Սա ժամանակի խնդիր մըն է, շատ քիչ ժամանակի:

«Ռուս գիւտարարութեան մօտէն ծանօթ տնօրէնականութեան այս յայտնութիւնները ու կարծիքը, որ թրքաւէր լիբերալ չէ մէջ կ'ընտրուի առանց առարկութեան, բաւական են ապացուցանելու թէ հայկական խնդիրը այսօր լուրջ կերպով կը զարգային Բեղադրուելի դաշինքը. թրքաւէրները իսկ համագործակցութեան մը կ'որոշուին մը մօտաւոր է: Նոյնպէս Ֆրանսական կառավարութիւնը լրջապէս կը զարգայ մեր խնդիրը, արտաքին գործոց նախարար Մ. Տէլբասէն, Չարլ ու կոմս Լամուտորֆը Ֆրանսոս գտնուած առանց առանց հետ տեսակցութեանց միջոցին, երկար խորհրդակցութիւն ունեցած էր Հայկական խնդրին կարգադրմանը մասին, և նա Հայ. Բեղադրուելի դաշնակցութեան կողմէ Մ. Բէկա Քիլառը տեսակցութեան ընդունած էր. ահաւասիկ վերջին տեղեկ ալ կ'իմանանք, թէ նախընթաց օր Բարիկի Հայոց քահանան և Տ. Մ. Չերազ ներկայացած են Մ. Տէլբասէին ու խնդրած, որ նախաձեռնութիւնը ունենայ Պէրլինի դաշնագիրը ըստ ստորագրութեան միջոցին, որ մէկ ժամ տեւեց, Մ. Տէլբասէ շատ մը եղանակներով հայկական խնդրին իր համակարգը յայտնեց:

Այս բոլորը կը հաստատեն թէ

պաշտօնական ֆրանսան ըստ աւել. նոյնի տրամադիր է մեզ ի նպաստ կարելին ընելու:

Յաջորդ թուով պիտի արտատը տպենք «Տէլլի Քրօնիքը» տեղիական մեծ լիբերալ մէկ կարեւոր իմպարատրական Հայոց նկատմամբ:

ՀԱՅԱՍՏԱՆ ՈՒ ԵՐՈՊԱ

Եւրոպայի ու Ֆրանսայի մէջ մանաւանդ Մուշու Նաճաճին մէջ տեղի ունեցած վերջին դէպքերը բոլորովին անարժանաւոր չմնացին բարեբախտապէս. եթէ Հայաստանի կացութիւնը այժմ նոյնքան անստույգ է որքան իստորածներու վաղորդայնին, չէ՞ք կըրնաք գոնէ չը զիտել որ նոյն առանց նախադրեցի գիւտարարութիւն մը նոյն իսկ մեզու ի նպաստ փոփոխութիւն մը յայտնուած չըլլայ: Աս մեզ ի նպաստ բառին նշանակութիւնը պէտք է չափազանցելու ու Եւրոպական միջամտութեամբ մը մեկնել: Գոյց վերկազործ թուականի մը մեր անձկագին պատուովը եւ կամ ուրիշ շարժառիթներով օտարի մը կողմէ գրուած յօդուած մը եւ կամ հրապարակախօսի մը արտասանած մէկ բանախօսութիւնը իր Հայաստանի բարեկարգութեան մէջ պաշտօնական յայտարարութիւնը նկատելու տկարութիւնը ունեցանք. նոյն համեմատութեամբ մեզ համար պատրանքը դառն եղաւ. Երկու ծայրայիղութիւններն ալ գաղափարաւոր են: Ո՛չ լիալիր աւելցուելիւն, ո՛չ անպատակ քաժանք:

Հետեւապէս, առանց մեր խնդրին վրայ եղած համակարգի կամ հակակրօնքի օտար արտապայտութեանց ծայրայիղ կարեւորութիւն մը տալու, մեր դժբաղդ հայրենիքին փրկութեանը տեսակցութեան անհրաժեշտ զանգառութիւն մը ըրած պիտի ըլլայինք: զանազ: բոլորովին արհամարհելով: վասնզի եթէ իրաւ է թէ Հայաստանի բարեկարգութեան միակ գերադր ու գերադր իրաւաբարը գիւտարարութիւնն է անխառնափոխ կերպով: ոչ նուազ ճշմարիտ ալ է միւս կողմէ որ նոյն գիւտարարութիւնը իր կարգին «Հանրային կարծիք» ըստածին տրամաբանութեանը հնարակուած է ու անոր կը հպատակի ինչպէս վայրաշարժ իր կողմերուն մէջ ծածկած չորհին, ինչպէս տեղեկութիւն թաւալական շարժումը կանոնաւորող թաւալական զօրութեան: Հանրային կարծիքը շահելու հետամտութիւնով, գիւտարարութեան գործակցութիւնը

մեզ ապահովելու պիտի ձգտինք: Այս պատճառաւ է որ երկրին մէջ մեր պայքարող գործունէութեանը կարեւորագոյն աշխատանքը նախընտրելի մէկ տեղ, Եւրոպայի մէջ տարբեր գործունէութիւն մըն ալ չենք կրնար արհաւիրել: Եւրոպայի մէջ գործունէութիւնը հաւանական չէ որ գործնական արդիւնքի մը յանգի, գիւտարարութեան ներկայացուցչներուն մօտ եղած անհամակարգի միջոցով եթէ զայն մեկ նեմք. Դիւան. ներկայացուցչի մը միջոց ինքնակուած է իր նախապետական պետերուն հրամաններուն, ու միշտ իր անհամար հրապարտութեան տեղեկագիրներովը իրենց ճշգրիտ կացութեանը վրայ աւելի լատեղեկութիւն կուենայ: Դիւանագիտութեան ու իր ներկայացուցչներուն վրայ հզօր ազդեցութիւն մը բանեցնելու լուազոյն միջոցը «հանրային կարծիք»ը գրգռելուն մէջ պարտինք որոնել. հետեւապէս Եւրոպայի մէջ մեր գործունէութիւնը այս պէտք է ունենայ իրեն միակ առաջադրութիւն. հրապարակախօսութիւն ներկայակերպել, մամուլի միջոցաւ Հայաստանի վրայ տեղեկութիւններ տալ, հրապարակախօսութեանը, երեսփոխաններու համակարգը ու աշակցութիւնը գրաւելու ջանալ ամեն կարելի ու դրաւիչ միջոցներով, վերջապէս մարդասիրական քննութեանը ու կարեւոր գումարութեան օրակարգը հայկական խնդիրը անցնելու ջանալ. ահա ինչ որ կը հասկնանք Եւրոպայի մէջ մեր գործունէութեան վրայ:

Յաջորդ ճամբու մը մէջ ըլլալ կը թուի այժմ այդ գործունէութիւնը. ծանր սխալ մըն էր զոր մեր գործիչները ըրին իրենց գործունէութեան գիտաւոր թաւալ միջոցին ընտրելով. յաջորդ քայլ մըն էր որ եղաւ Ֆրանսայի մէջ գործունէութիւն մը Անգլիոյ մէջ եղածէն նախընտրելով. «Ինչ որ Ֆրանսայի մէջ ցանկենք, կը գրէր Պ. Չերազ Վալենթին Բարիկ տեղեկափոխութեանը առթիւ, Ռուսիոյ մէջ պիտի քաղենք»: Ոչինչ աւելի ճշմարիտ. ու այս ողջամիտ քննարկին պատճառները այժմէն կը քաղենք. այսօր ռուսական մամուլը, նոյն ինքն «Եւրոպէ վրէժիտ»ն, մեր ցեղին ամենէն անողորմ հալածիչը, սկսած է հայասիրական կարեւոր հրատարակութիւններ ընել, ու ինչպէս «Եւրոպէ քանտան» գիտել կուտար, հայերուն համար անձառ բարեբաղդութիւն մը պիտի ըլլար եթէ ռուս գիւտարարական շրջանակներն ալ ռուս մամուլին հայասիրական գաղափարներով ոչ ուրուած ըլլային: Անգլիոյ մէջ հայերուն կողմէ եղած գործունէութեան մը պակասը նախընտրելի է քան իր պատճառներով. նախ արդէն անգլ. մամուլը ու հանրային կարծիքը, ինչ-

պէս ազատական թէ պահպանողական կուսակցութեանց անդամներուն համակրանքը ապահոված ենք, այնպէս որ Անգլիոյ մէջ գործունէութեան մը չօգտօնելի արդիւնքը լաւ չըմտնուիր, մինչ Գերմանիոյ ու Աւստրիոյ մէջ տակաւին այս մտքով բան մը չենք բրած, ու յետոյ ձգենք որ Պոլսեցիները հէմ իր մղած պատերազմէն ի վեր քաղաքակիրթ աշխարհին առջեւ Անգլիոյ վարկը մեծապէս կուսրուած է ու հաւասակաւ բան մը պիտի ըլլար կամ թագուն գիտումի մը պիտի վերագրուէր Անգլիոյ կողմէ մեզ ի նպատակ եղած նախաձեռնական քայլ մը, վերջին քառորդ դարու տեղեկութեանը ուսական քաղաքականութիւնը անհրաժեշտօրէն անգլիականին մերթ անհպատակ ընդդիմադրութեան մը մէջ կայացած է. Սէնդ ձէյմսի դահլճին մէկ կամակատարութիւնը ստուգապէս ուսական շօղիներուն ընդդիմադրութեանը ու առեւի կամ նուազ անհիմն կասկածանքին պիտի բաղխէր: Յըրանայի մէջ գործունէութիւն մը սակայն մեզ ոչ պիտի Արցախի եկրոնները կը վերադրէ եւ ոչ ալ ուսական թագուն գիտում մը, ու կը տեսնենք ալ որ Ֆրանսայի մէջ է որ կրնանք բաղդատօրէն նուազ շահախնդիր անձնաւորութեանց հանգստի շատոնց է որ Հայկական խնդիրը Անգլիական մըտքերը գերազգահելէ դադրած է, մինչդեռ Ֆրանսայի մէջ ծայրայեղ թափով մը անոր այսօրեայ իշխանութեան: Ռուսիոյ գրեթե ամբողջ Ֆրանսայի մէջ ուրեմն պարտի կեդրոնական մեր Եւրոպական գործունէութիւնը: Տարիէ մը ի վեր է «Բրո Սրմենիա»-ի հիմնադրութենէն ի վեր, որ հայկական խնդիրը կըսկի գրաւել այն քարծր ուշադրութիւնը, որուն այնքան արժանի է:

«Բրո Սրմենիա»-ի քաջարի անօրէնը Պ. Քիլան, հաւասարապէս «Օոսո»-ի, «Քոնգրամբորէնի», Մէրքիւր տը Ֆրանսայի, «Ռեվիւ տէ Ռեվիւ»-ի (*) մէջ հայկական խնդիրը իր ներկայ ունեցեալ ըտլոր մանրամասնութեանց մէջ կը հետապնդէ կըրոնամտութեամբ մը որու մասին իրեն բաւական չնորհապարտ պիտի չկրնամք ըլլալ: Գլխամաս ու Բաքուսէ, «Բրո Արմենիա»-ի հոգակաւոր հիմնադիրները, «Բրո Արմենիա»-ի էջերէն դուրս ալ իրենց ազդեցիկ հեղինակութիւնը հայկական խնդրոյն չեն զլանար. առջինը իր «Պլոք»-ին, ու երկրորդը «Օոսո»-ին ու «Թան»-ի մէջ: Ուրիշ ակադեմիկոս հըրապարակագիրներ, ինչպէս «Ռեվիւ տէ Բարբի»-ի անօրէն հոգակաւոր պատմագէտ եւ Ակադեմիական էդնէսը Հովիտ, հայկական խնդիրը կը գրգռեն անընդհատ. առանց ուրեմն այս հաշմանապատ արտայայտութեանց պահանջածէն աւելի կարեւորութիւն տալու, գիտնամք անոնցով սրտապրնդուիլ, ու յար աննկուն ու անխնայ ընթանալ նպատակին առ որ կը ձգտուինք:

Տ. Է.

ԹԵԼԵԳՐԱԳՐԱԿԱՆ

[Մեր մասնաւոր քղաքական]

ՍՕՅԻԱ, 15 Հուլիս, 1901

Սյուր ժամը 4ին յետ միջաւոր բացուեցաւ Պուլկարական ժող.

(*) Կարգաւ այս հանգէսին վերջին պրակին մէջ «Հայկ. նոր շարքերը» վերնագրով անոր դրած մէկ չափազանց հրահանգիչ նախադրումով:

Տ. Է.

Ազգային ժողովոյ սովորական առաջին նստաշրջանը, իշխանը որ այս տառապանքներէ քաղաքապետութեան կառուարեց բացուած շատ փոփոխութեան հանգէտով, Պուլկարէն մինչեւ Սապրանիէն ճամբուն երկու կողմը զօրքեր շարուած էին. ժողովրդեան ստուար բազմութիւն մը խռնուած էր թէ Սապրանիէին ներսը եւ թէ դուրսը, թնդանթի 21 հարուածներ ծանուցին իշխանին ելքը պաշտօնէն եւ Սապրանիէին դրան առջեւ, ուր կըստապէին Ազգ. Երեսփ. ժողովոյ Առեւտրապետը եւ Նախարարը, գիտաւոր լով Ն. Ա. Բարձրութիւնը առաջնորդեցին գէպի գահ: Փահոճաբը, իշխանակալով կառավարութեան անգույ շանքերը երկրին յառաջդիմութեան մասին, յայտնեց նաեւ թէ պետութեան երկամտական եւ տնտեսական վիճակը զոհասցիչ է: Ի վերայ այդ ամէնայն յարեց իշխանը, Պուլկարիս կը կայտարարէր հայրենասէր զաւակաց անկեղծ շանքերուն, արդիւնաւոր ընկու աշխատութիւնները, որոնք ձեռք առնուած են վարչութեան բոլոր ճիւղերուն մէջ հաստատելու կարգը եւ օրինակաւ նուիրելը: Յիշեց մի քանի ամիս առաջ Պարին հօրեղբոր օրդի Մեծ իշխան Աղեքսանդր Միխայիլովիչի այցելութիւնն ի Պուլկարիս, իբր երաշխիք Ապարտար տէրութեան հետ մեր ունեցած բարւոք յարաբերութեան: Ծանոց թէ ներկայ տարեշրջանիս կառավարութիւնը բաց ի պիտոճէն եւ ուրիշ կարգադրութիւններէ նաեւ հետեւեալ օրինագծերը պիտի ներկայացնէ Սապրանիէին:

- Օրինագիծ պաշտօնէից եւ պաշտօնէական միակերպ դրութեան:
- Օրինագիծ վարչութեանց նախագահներու եւ գումարներու:
- Օրինագիծ ազգային առողջապահութեան:
- Օրինագիծ Հողային բաժանման երկրին գումարական տնտեսութեամբ:
- Օրինագիծ պետական, նահանգական եւ գաւառական ճանապարհաց:
- Օրինագիծ հանրային յանձնառութեանց:
- Օրինագիծ պիտոճէի հաշուարար դարութեան:
- Օրինագիծ ծխախոտի:
- » Անտառներու:
- » Երկրագործական մը շահութեան, ապահովութիւն կարկտահարութեան գէտ:
- Օրինագիծ ձկնարուծութեան:
- Արդարեւ ուրախալի երեւոյթ է տեսնել թէ երկու երեք տարիէ ի վեր Պուլկարիոյ ներքին երկրագործական, փոփոխական եւ տնտեսական տաքնապնդներու դառն պտուղը քաղելէն յետոյ, այսօր կը գտնուինք դէպի շարժում իւր առաջնորդող շաղկին մէջ. եւ առաջին ժամանակէ աւելի այսօր կըրնա՞ք վստահ ըլլալ մեր ապագայի բարեկաւարտութեան մասին: Ինչպէս

յիշուած էր արդէն փոխառութեան մասին՝ որուն վերջնական վաւերացումը կըստապէս ներկայ Սապրանիէին եւ որուն պայմանագիրը ստորագրելու համար մի քանի օր առաջ Բարիդի դրամատունէն պաշտօնեաները եկան տեղա, իր տնտեսապէս ընձեռելիք օգուտները բազմաթիւ պիտի ըլլան:

Սակայն երբեմն ուրախութեան պայծառ երկնքի վրայ միթիւն ամպեր ալ կը տեսնուին որոնք թէեւ շատ վաղախոյս կըլլան, բայց եւ այնպէս վարկեան մը մեզ ոչ ուրախ մտածողութիւններու կառաւ չորդեն: Ամերիկայի շատ մը քաղաքներու մէջ միթիւններ տեղի են ունեցեր Պուլկարիոյ գէտ, Միս Սթոն միսթոնորուհին առեւտրական խնդրոյն առթիւ եւ որոշեր են ստիպել Միացեալ Նահանգաց կառավարութիւնը որ իր տարմիչով Պուլկարական Նահանգներու առջեւ ցոյց ընէ: Թէեւ չենք յուսար թէ կառավարութիւնը անսայ այս ոչ իրաւացի միթիւններու որոշման, համոզուած ըլլալով թէ Միս Սթոնը ոչ Պուլկարիոյ հողը կը գտնուի եւ ոչ ալ Պուլկարիէն առեւտրուած է, ինչ որ տարածայնեցին Պուլկարիոյ յայտնի կամ գաղտնի թշնամիներ, սակայն եւ այնպէս բարոյական աշխարհին առջեւ Պուլկարիոյ պատուին վարկաբեկում մըն է եւ առ այս ամիս ըլլալուն քիչ օրէն իրենք Ամերիկացիք եւս համոզուած պիտի ըլլան:

«Հիւ Երբ ժողովոյ» լրագիրը Սոփիան կրկնաւ թէ, Պէրլինի ամերիկեան հիւպատոսը, Միսոն, եկած է տեղա խորհրդակցելու հար. Մը Տիգրինսօնի հետ Միս Սթոնի ուղարկման միջոցներուն վրայ: Կիմանայ նաեւ թէ Սոփիայի առական հիւպատոս Տ. Պահմէթիէվ իր անձնական ծախքով մարդ զրկած է բանակցելու համար առաջնորդներուն հետ եւ յուսալի է թէ Միս Սթոնի ճակատագրին ինչ պատու տեղեկութիւնով պիտի վերադառնայ:

Արմենակ

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Ի.ՊԱՍՏ ԵՐԿԱՆՈՐ ՈՐԲ. ԲՆԿ. ՀԱՅՈՅ ՎԱՌԱՅԻ

Պատիւ ունինք յայտարարելու թէ, Հայ. դերասանական Վէսէյօ խումբը ըստ իր խոստման բոլորովին անձնուրբար, ի նպատակ Բնկերութեան յառաջիկայ հիւպատոսի հոգա. 25ին պիտի ներկայացնէ խնամքով պատրաստուած «Երկու Յիսնապետներ» թատերախաղը խոստ ծիծաղաշարք երկու վարագոր զաւեշտով մը: 26օսարանապետ Տ. Տիգրան Թիւֆէնճեան նոյն գիշեր թատերասրահ ձրաբար Որբախնամիս տրամադրելի ըրած է: Ուստի Գործ. Ժողովս կուգայ հրապարակել շնորհակալութիւն յայտնելու Պատ. Վէսէյօ խումբին եւ Տ. Թիւֆէնճեանին:

Վստահ ենք եւ լիայոյս թէ Պատ. ազգայինք՝ երբ Գործ. Ժողովս իրենց ներկայացնէ ներկայացման գիւրամատչելի տոմարները, ամենայն սիրով եւ յօժարութեամբ պիտի մասնակցին սոյն նուիրական եւ բարձր ձեռնարկին. անպամ մը եւս ցոյց տալով իրենց պարտաճանաչութիւն, եւ գիտնալով որ ներկայացման հասոյթը պիտի յառկացուի ընկերութեան առաջնորդ Հայաստանի հայ որբանոցներու մէջ խնամուող որբերու ուսման, կրթութեան եւ արհեստագիտութեան եւ թերեւս նոր որբերու որդեգրման, այն թշուառ եւ նօթի որբերուն, որոնք սպաւոյս սերունդը եւ հայութիւնը պիտի կազմեն:

Միամբ յարգանք
Դիւան Գործ. Ժողովոյ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԶԵԿՈՅՑ

Ազգ. Պատրիարքարանէ առ մեզ ուղղեալ պաշտօնագիր մը կը ծանուցանէ թէ Պուլկարիոյ քահանայք չի պիտի կարենան անգափօթութիւն ընել առանց Կեդր. կրօն. Ժողովոյ գիտակցութեան եւ արտօնութեան:

Այցել. հովիւ Հայոց Պուլկարիոյ Բարբ. Դ. Վ. Պաղմեան
13 հոկ. 1901
Թ. Բաղարճը

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՓԱՇԱ ՏԱՏԵԱՆ

(Շար. նախորդ քիւնէ եւ վերջ)
«Բարձր Յարութիւն փաշայի մեծ հօր» արքունի վառողապետ Պողոս պէյի շնորհած էր Իֆթիխարի պատուանշանը: Կայս. Իրաւէ մը արտօնեց Յարութիւն փաշայի գործածել այդ պատուանշանը: Յարութիւն փաշա ունէր հետեւեալ պատուանշաններ. — Իֆթիխարի, Օսմանիէի եւ Մէճիսիէի ակադակուտ պատուանշանները եւ Կրեմէի արծաթ շքադրամը: Օտար տէրութեանց կողմէ ստացած էր սա պատուանշանները. — Սպանիա՝ «Իզապէլ Լաքաթիք», Եթովպ. «Էթովպա Բօլէր», Գերմանիա՝ «Բրուսիական Թագ», Իտալիա՝ «Գուբիտ Կիթալի», Պարսկաստան՝ «Արեգակ եւ Առեւ», Պապը՝ «Պիոս Թ.», Ռուսիա՝ «ՍէնդՍթանիսլաւ», Ռումանիա՝ «Ռուսական Թագ», Սերպիա՝ «Թագովո», Յունաստան՝ «Ա. Փրիկի», Սեւ Լեւոն՝ «Ճանիլ», Ֆրանսոս՝ «Պատուոյ Լէպէտ», եւ Վէնեցիէլա՝ «Արժանիք»: Յարութիւն փաշա Տատեան զաւակն է Տատեան Յովհաննէս պէյի, որ 1818 ին ամուսնացած է Մանասեան Մինաս աղայի աղջկան հետ: Յովհաննէս պէյի զաւակներն եղած են հանգուցեալն զաւա, Առաքէլ պէյ, Դերբէս պէյ, Գրիգոր պէյ, երեքն ալ վախճանած արդէն: Յարութիւն փաշա Տատեան ծնած է 1830 ապրիլ 3ին, Սան Ստեփանոս, աւագ ուրբաթ օր. հետեւեալ օրն իսկ մկրտուած է եւ ի պատիւ Ս. Յարութեան՝ կոչուած է Յարութիւն: Յարութիւն փաշա մանկութեան եւ պատանեկութեան մէջ աւելի յաճախ դրածած է իր երկրորդ անունը Գալիպին: Հազիւ 16 տարու եղած ժամանակ իրկուած է Բարբի, ուր իր նախակրթութիւնը ստացած է Ֆրանսական ժողովրդական դպրոցի մը մէջ, եւ քիչ ժամանակէն Ֆրանսիայէն առած է կատարելապէս, անանկ որ 14 տարու եւ զած ժամանակ քննութիւն մը տալով ի ներկայութեան Բարբի Օսմ. Դիւանատան թարգմանի, մեծ յաջողութիւն ունեցած է:

1846ին Բարբի Սորպոնէն ստացած է «Պաշէլիէն էս սիսնիս» աստի-

ճան, եւ հաւանօրէն ինք առաջինը
եղած է Հայոց մէջ որ յաջողած ըլլալ
այդ քննութիւնը անցնելու Բարիկ
1846ին, Վենետիկի Միթրաքիոսին
թերթին մէջ հրատարակուած յօդուած
մը մեծ զովեւտով կը խօսի պատանի
Քարեգին Տառնանի վրայ եւ կը դը-
րուատէ անոր Թրանսալի ոստանին մէջ
ունեցած դպրոցական յաջողութիւն-
ները: Դարձին Կ. Պոլսի, պետական
ծառայութեան կը մտնէ, եւ հետագե-
աէ առաջ կերթայ, ինչպէս կերեւոյ
վերագրեալ տեղեկութիւններէն: Իր
ազգային առաջին պաշտօնը եղած է
1853ի առաջին Ուսումնական Խոր-
հուրդին անդամակցութիւնը որուն մէջ
իր ընկերներն էին Պալեան Նիկողոս,
Ռուսինեան, Պարտիզպանեան, Վա-
հան Էֆ. Սէրփիլէն Էֆ. Օտան Գրի-
գոր Էֆ. Աբրահամ Բաշա, Ամասեան
Յակոբ, Կարապետ Իւթիսեան եւն:
Անկէ ետքը Յարութիւն լաշա քանիցս
մասնակցած է Պատրիարքարանի Ժո-
ղովներուն, նախ իբրեւ ատենադպիր,
յետոյ իբր ատենապետ եւ միշտ ցոյց
տուած է ձկուն գործունէութիւն մը:
Բարիկը մէջ առած իր նախնական
կրթութիւնը շատ խնամեալ եղած է
եւ մասնաւորապէս դիտութեանց աշ-
խատած է, անակ որ Տոքթ. Ռու-
սինեան իր 1854ի տարեցոյցին մէջ
Յարութիւն լաշան կը կոչէ ընդհան-
ր, յիշատակելով դայ իբրեւ անգամ Ու-
սումնական Խորհրդոյ: Այդ նախակր-
թութեան շնորհիւ է որ Յարութիւն
լաշա առաջին կարգի ֆրանսերէն զը-
րելու կարողութիւն մը ձեռք բերած
է, որ իր ամբողջ գիւնարագիտական
ասպարէզին մէջ իր յատկանշական
կողմը եղած է իր գիւնարագէտի նուրբ
կարողութեանց հետ:

ԲԱՏԵՐԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

ՎԵՍԷԼՈ ԽՈՒՄԵՐ

ՏԻՍԵՐ ԵՐՈՒԱՆԻ ԵՐԱՍԵԱՆ

Ձգաւոր՝ որ ամենինչութեան մար-
մաջով թեւ ու թոխ ապ կուղէ եր-
բեմն բեմական մարդուն, ապահովա-
պէս ապաշնորհ կը դարձունէ զերա-
սանական ասպարէզը, ուր սոյլի կը-
ռինչներ պատրաստ են թեւատելու զայն

ՊԱՏՄՈՒԹԵՆԷ ԷՋ ՍԵ

ԼԵՀԱՅԻՌՑ ԱՊՍՏՈՒՄԲՈՒԹԻՆԵՐ

—o—

Այն ատեն հրաման եղաւ պարպել տուներուն
եւ բազմութեան վրայ, եւ փութով բազմութիւն վի-
րաւորք գետինը ինկան եւ 200 մեռեալք: Ամբոխը
աղաղակներով ցրուեցաւ եւ քիչ վերջը մոռեալագ
լուծութիւն մը տրեց փողոցներուն մէջ: Երկրորդ
օրը քաղաքը զինուորական կերպով բռնուեցաւ եւ
հրատարակուեցաւ պաշարման վիճակը: Խառն ար-
գիւրեցաւ ժողովրդեան հանդիսաւոր թաղումն մե-
ռելոց եւ սոյն զգեստներով հաւաքածներ:
Վարչաւոր յաշտական յուղմունքը տարածուել
էր նաեւ մերեւոտ գաւառաց: Հոկտեմբեր 10ին
Հոսիէվո Լիթուանիոյ եւ Լեհաստանի սահմանագը-
լին վրայ երկու մեծ թափօք մինն լեճ եւ միւսն
Լիթուանիայի, սօճախմբեցին երկուց ցեղից դա-
րական միութիւնը: Ռուս կառավարութիւնը, մար-
դասիրական խոնամութեամբ, որպէս զի արեւն չի
թափի, բնաւ արգելք մը չեղաւ հանդիսին:
Մայիս 30ին վախճանէր էր խոնամ իշխանի կոր-
չաքով եւ կայսրը անոր տեղ անուանել էր զկոմսն
Լամպէրը, որուն պաշտօն յանձնուած էր հան-
դարեանց եւ եկեղեցական դասը եւ անոր միջոցաւ
զօղովորքը: Արդէն Ապրիլ 22էն մարքիւն Վիէ-
լիփուրքի հրովարտակով մը հրաւիրել էր զլեճ քա-
հանայս չղրդեւելու զօղովորքը եւ եկեղեցեաց մէջ

եւ յուսանատութեան մորմօքէ աղա-
ղակը խելու անոր սրտէն:

Պապական ինչպէս կերեւոյ, շատ
լաւ ըմբռնած է այս հակայ ճշմարտո-
թեան անողորմութիւնը: Անիկա՝ միշտ
իր տարրին մէջն է: Նոյն յուզող,
նոյն ցաւցնող ու նոյն զայրութիւնով
եւեքտարականացնող դերասանն է, որ
ամեն անգամ նոր երանգ մը կաւել-
ցունէ անպատճառ հանդիսականներու
հիացման վրայ:

Իսկ Պէնիտան ըստած յացութեան
տարբերակութիւնը՝ զարուգութիւն
մըն է, որ զիտցած է իւրացնել ի-
հարկէ տարբերակ ընդունակութեամբ
—գաղտնիք տէրն ըլլալու երկու հա-
կոտնեալ զգացումներու եւ երկուքին
մէջ ալ փայլելու, հաւասար ճարտա-
րութեամբ:

Երաման՝ որուն լեզուական պա-
կասը—զոր չէ խնայած իրեն՝ բնու-
թեան մէկ անիծապարտ քմահաճոյքը
—ուրիշ ձգտումներ ունենալու իրա-
ւունքը չը տար իրեն, բան չը պակ-
սեցնել՝ սակայն, մեր համակրանքէն,
երբ հաճի՝ ճիշդ Պապականին պէս,
միայն, բայց միայն, իր կենպէն զը-
լուխ ցցնել եւ զինք բնորոշող ոյնե-
րով միայն երեւալ բնին վրայ: Ա-
սիկայ է միակ ապահով միջոցը՝ իր
վերջնական համբաւը չիտելու:

Ձոր օրինակ, որքան համակրելի է
ինք, երբ թուրք ծերի մը թիփիկ
միմոսութեան տակ կուգայ բառերու
ծամծամքներ նետել, ճիշդ թուրքի
մը երկարող, յայնցնող ու տափկցնող
չեղանքով: Որչա՛փ ծափելի է, եւ
ապուշի մը տարտամ նայուածքով կը
ապշեցնէ ամեն զինք զիտողները եւ
իրեն միայն յատուկ միմիք ծամած-
ուծութիւններու տակ սպփսքոնուելիւնը
կը մարմնացնէ կատարեալ յաջողու-
թեամբ:

Այս գնահատելի ճիւղերը՝ որոց առ-
ջեւ սակայն պէտք է վերջակէտը դնէ
համակրելին Երաման—հրաժարելով
ամեն ուրիշ ձգտումներէ—եւ որոնք
լայնօրէն կը բաւեն արդէն իր գերա-
սանի անուանը վերջնապէս ապահովե-
լու, ասոնք են, որ կը կարեն կը
նետեն ստորագրութեան երկու վան-
կերը եւ յարգանքի զգացումով իրեն
կը պահեն միայն մէկ վանկը:

Ծափը:

Ծափ ոչ սոյն

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Կիլիկիոյ Կաթողիկոսին ընտ-
րութիւնը՝ որուն երկուշաբթի օր
ձեռնարկուած է, հետեւեալ կեր-
պով կը կատարուի:

Ընտրողական Ժողովը՝ որ Ատա-
նայի մէջ գումարուած է, նախ եւ
առաջ կընտրէ ընտրելիներ, որոնց
մէ վեց առաւելագոյն քուէ առ-
նողներուն անունները կը ծանու-
ցուին Պատրիարքարանի եւ դատա-
կան ու կրօնական գործոց նախա-
րարութեան Թերկիայացուելով, ըստ
օրինակի Յունաց Տիեզերական
Պատրիարքի ընտրութեան, որ-
բագրութիւն (՝) կը կատարուի ու
ցուցակը կը վերադարձուի Պատ-
րիարքարանի եւ Ատանայի ժողո-
վոյն, որ այն ատեն երկրորդ ան-
գամ ըլլալով, սրբագրեալ
ցուցակին վրայէն Կաթողիկոսի
վերջնական ընտրութիւնը կը կա-
տարէ եւ ընտրեալին անունը հա-
ղորդուելով Սուլթանին, ասոր հա-
ւանութեանը համեմատ կը հաս-
տատուի Պէրաթով մը:

Այժմ կառավարութեան եւ Պատ-
րիարքարանի համաձայնութեամբ
տրուած հրահանգներուն համե-
մատ, իւրաքանչիւր Առաջնորդ
կամ Տեղագահ անձամբ պիտի եր-
թայ իր քուէն տալ, կամ իր կող-
մէ պատուիրակ մը պիտի ղրկէ՝
Բայց իւրաքանչիւր թեմի կողմէ
նշանակուած աշխարհական անդա-
մը պարտաւոր է անձամբ երթալ
իր քուէն տալ, չէ կարող իր կող-
մէ ուրիշ մը ղրկել կամ նշանակել:
Աշխարհական բնորոշ մը երկու
քուէէ աւելի չի կրնար տալ:

Կառավարութեան կողմէ Ատա-
նայի կուսակալութեան Մէթրուպ-
ճին ներկայ պիտի ըլլայ Ընտրո-

ղական ժողովին նիստերուն, Ընտ-
րող եկեղեցականները քսան հոգի
են, իսկ աշխարհականները քա-
ռասուն:

—Տատեան Յարութիւն փաշայի
յուզակաւարութիւնը շքեղ կեր-
պով կատարուած է անցեալ չորեք
շաբթի օր Բերայի Ս. Երրորդու-
թեան եկեղեցոյն մէջ, ինքերկա-
յութեան մայրաքաղաքին դեսպա-
նական, բոլոր կրօնապետական եւ
նախարարական մարմիններու ներ-
կայացուցչներուն, բոլոր հայ ե.
կեղեցական եւ աշխարհական բար-
ձր դասոյի ու ժողովրդական խումն
երկեսեւ բաղմութեան, եւ ընդ նա.
խագահութեամբ Պատրիարք Օր.
Սանեանի սր կարճ դամբանական
մը խօսած է: Յուշարկաւորութեան
ծախքը Սուլթանը իր անձնական
գանձէն հոգացած է եւ արտօնած
որ մարմինը Պէշիկթաշի Ս. Յա-
րութիւն եկեղեցիի բակին մէջ
թաղուի, ըստ հանգուցելոյն կան-
խաւ յայտնած փափաքին եւ Ազգ.
վարչութեան որոշման:

Ի յարգանս Յարութիւն փաշա-
յի յիշատակին եւ ի նշան սգոյ
Ազգ. Ժողովները իրենց նիստերը
դադրեցուցին անցեալ շաբթու:

—Պոլսոյ Խապուղի Ներսէս.
եան վարժարանի ուսուցչուհիներէն
Օր. Մաքրուհի Իմօտոյ կ'ամուս-
նանայ Լրեայ երիտասարդի մը
հետ, որ բողոքականութիւնը ըն-
դունել է անցեալ կիրակի օր:
Օրիորդը եւ բողոքականութեան
պիտի յարի, երիտասարդին հետ
կարգուելու համար բողոքական
պառնով:



ազգային երգերը գաղթեցնելու, բայց ոչ քահա-
հանայք եւ ոչ արքայիսկպոսական քոնանորդը
յանձն առին այս միջամտութիւնը: Եկեղեցական
դասուն ոգին չէր ուզեր հաշտ ըլլալ յետ այնքան
տարի կրօնական հալածանքներու: Կոմսն Լամպէրթ
բովանդակ Լեհաստանը պաշարման վիճակի մեջ դը-
րաւ, արգելից որ երեք անձինք իսկ միաբան խմ
րուին ինչպէս նաեւ եկեղեցեաց մէջ ազգային եր-
գերը եւ սոյն զգեստները: Հոկտեմբեր 15ին Գո-
չիւքքօ զօրավարին մահուան տարեդարձին ժողո-
վորդը Վարչաւոր մայր եկեղեցին խռնեցաւ: Ձին-
ուորական հրամանատարութիւնը զինուորներով
պաշարեց եկեղեցին: Ժողովուրդը յորս կային նաեւ
բազում հանդարտաբարոյ անձինք, վախերէն եկե-
ղեցիէն դուրս չեկան եւ հոն անցուցին գիշերը:
Երկրորդ օրը զինուորները բռնի մտան Մայր եկե-
ղեցին եւ 2000 հոգի բերքը կալանաւոր տարին:
Արքեպիսկոպոսական փոխանորդը զմայր եկեղեցին
պղծեալ հոշակեց եւ դռները գոցել տուաւ մինչեւ
որ «հաւաստացեալը կարենան գալ ապահովութեամբ
ազօթելու»: Կոմսն Լամպէրթ որուն անգիտու-
թեամբ եղեր էր եկեղեցեւոյն պաշարումը, բողոքեց
կէրպէնսով միջ զօրավար հրամանատարին բրածին
ղէմ: Եւ յետ բուռն վիճաբանութեան մը ընդ կու-
սավարչին, ինքզինքը աւարտական հարուածով մը
ծանր վիրաւորեց եւ քիչ ատենէն մեռաւ: Եւ կոմ-
սն Լամպէրթ իր հրաժարականը տուաւ: Լամպէրթ
կոմսին տեղ զրկուեցաւ կոմս Լուսինար որ խռովա-
բարաց զլիւաւորները եւ երկրագործութեան ան-
դամները կալանաւորելի տալով զղեկներու մէջ
զրկեց: Կալանաւորուեցաւ նաեւ արքեպիսկոպոսա-

կան փոխան զը եւ մահուան դատապարտուեցաւ.
բայց յետոյ այդ պատժէն ազատ մնաց Հոովմայ
Քահանայապետին միջնորդութեամբ: Պարզ քահա-
նայ մը, Յէլիսաբ, որ մինչեւ այն ատեն Բեկըր-
պուրկ ապրել էր եւ Պետութեան հաճելի կը հա-
մարուէր, արքեպիսկոպոս անուանուեցաւ, որ Վար-
չաւոր գալով եկեղեցիներու դռները բանալ տուաւ:

Արքեպիսկոպոս Բ. միշտ նոյն յուսով որ կարենայ
վերջապէս քաղցրութեամբ եւ բարեփոխմամբ չա-
հիլ զլեհալ իր եղբայրը Կոստանդին Մեծ Դուքսը
փոխաբայ անուանեց Լեհաստանի, իրեն խորհըր-
դական տալով զմարքիւն Վիէլիփուրքի որ թէպէտ
հայրենասէր, բայց միշտ այն կարծիքը պաշտպանած
էր որ Լեհաստան իր ազգային եւ տոնածին օրէնք
ներով պէտք էր միացեալ մնար Ռուսաստանի: Մեծ
Դուքսը իր եղբորը իզձերով ներշնչեալ, գաւառա-
յին ազգային տեսակէտով կարգադրութիւնք հաս-
տատեց, կուսակալական ժողովոց գլուխք, դար-
ձեալ լեճ պետական խորհրդոյն անդամք, բնիկ լե-
հացիք անուանուեցան ի կայսերէն: Համալսարանը
ազգային կերպարանք մը առաւ, հասարակաց օ-
րէնքին համաձայնելու համար, զարտուրութեամբ
մը հրէից եւս ընդարձակ առանձնաշնորհութիւնք ե.
զան: Մանրագլուխ հայրենասէրք որոնք անգործա-
գրելի եղանակներով չէին սնանել, խորհրդովք օղնե-
ցին վարչութեան: Այսու հանգեւ շարունակուե-
ցան զաղտ ընկերութիւնք, արգիլեալ երգերը, եւ
մինչեւ կաւանաւանութիւնք եղան Լուսինարի
Մեծ Դքսին եւ Վիէլիփուրքի կենաց գէմ:

Պատմ. Հ. Մ. Նոյնիսան

(Շարունակելի)

